# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 02/7.1/6092-16 «01» 12 2016 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ տկն Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թ. նոյեմբերի 24-ի N 314-ի 9 գրության՝ ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հաշվեկշռում գրանցված ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման ծախսերի վերաբերյալ տեղեկույթ:

**1. 2016 թ-ի համար որքա՞ն գումար է հատկացվել գերատեսչության հաշվեկշռում գրանցված ծառայողական մեքենաների պահպանման ծառայությունների մատուցման համար:**

ՀՀ մշակույթի նախարարությանը 2016 թվականին նախարարության հաշվեկշռում գրանցված ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման համար ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 1323000 ՀՀ դրամ գումար:

**2. Ո՞ր ընկերությունների հետ են կնքվել այս ծառայությունների մատուցման պայմանագրերը:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կազմակերպված մրցույթի արդյունքում ՀՀ մշակույթի նախարարությունը 2016 թվականին նշված ծառայությունների ձեռքբերման նպատակով 939000 ՀՀ դրամի չափով պայմանագրեր է կնքել «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ /պատճենները կցվում են/:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ОБЩИЙ ОТДЕЛ

Գործերի կառավարման վարչություն
Կատարող՝ Պ. Թադևոսյան
Հեռախոս՝ /011/ 52-39-37

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,